**Արձանագրություն N 3**

ՀՀ ՈԿ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04 սեպտեմբերի 2017թ
ժամը 12:15

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա.Մաթևոսյանը
անդամներ՝ Ա.Բադալյանը, Ս.Ավանեսյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

**I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին**

---

(Ա.Մաթևոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Հրավերով սահմանված ժամկետում «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ն և «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն հանձնաժողովին են ներկայացրել հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Մասնակիցների և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի մասնակիցների ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց.

ա/ «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի և «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել 1-ին, 2-րդ, 4-րդ չափաբաժինների համար,

բ/ «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ -ին ընտրված մասնակից ճանաչել 3-րդ չափաբաժնի համար:

Ընտրված մասնակիցներ են ճանաչվել որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

**II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին**

---------------------------------------------------------------------------

(Ա.Մաթևոսյան)

5. Հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ ______________ Ա. Մաթևոսյան

անդամներ՝ ______________ Ա.Բադալյան

______________ Ս.Ավանեսյան

քարտուղար՝ ______________ Գ. Ջանջուղազյան